



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՍ
 DIOCÈSE CANADIEN DE LA SAINTE ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE
 ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH CANADIAN DIOCESE

S. Աբգար Եպս. Յովակիմեան, Առաջնորդ

Évêque Abgar Hovakimian, Primat

Bishop Abgar Hovakimian, Primate

Սիրելի Հաւատացեալ Հայորդիներ,

Գանատահայոց Առաջնորդարանի հովանաւորութեան տակ հաստատուած «Հիմնադրամ Հայաստանի երեխաներու» ծրագիրը ծնունդ արած է 1990-ին որուն նպատակն է օգնութեան ձեռք երկարել 1988-ի աղետալի երակրաշարժին եւ ապա արցախեան հերոսամարտի հետեւանքով ու այլ պատճառներով որբացած հայ երախաներուն:

Ծրագրի իրականացումէն ի վեր, Թեմի հաւատաւոր գաւակներու հոգատարութեան շնորհիւ, **կարելի դարձաւ մինչեւ օրս խնամատարել շուրջ 2000 որբեր ու կարիքաւոր երախաներ:**

Ժամանակների առաջընթացը նաեւ կը թելադրէ մեզի որոշակի փոփոխութիւններ արձանագրելու հիմնադրամի առաքելութեան մէջ: Ակնյայտ է, որ ծրագրի նպատակը իրեն սպառած է ժամանակի ընթացքում: Ուստի, որոշուեցաւ հիմնադրամի գործունեութիւնը 2015թ. Էն շարունակել որոշակի փոփոխութիւններով:

Հիմնադրամի նպատակն է յետայսու գործունեութիւնը կեդրոնացնել Հայաստանի սահմանամերձ գիւղերու ծնողազուրկ կամ կարիքաւոր ընտանիքների անչափահաս գաւակներու օգնութեանը:

Մէկ կողմէն ծրագիրը կը շարունակէ օգնել հայ երախաներուն, միւս կողմէն փոքրիշատէ կը նպաստէ սահմանամերձ շրջանների պահպանման ու զարգացման գործին:

Այսու կը դիմենք Ձեզի Հիմնադրամի անունով շարունակելու այն բարի ու ազնիւ քրիստոնէական աւանդութիւնը զօրակցելու եւ աջակցելու կարօտեալներու կեանքի ուրախութեանն ու մխիթարութեանը:

Աղօթքով եւ Օրհնութեամբ՝

S. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան
 Առաջնորդ Գանատահայոց

Dear faithful,

The Children's Fund for Armenia (CFFA) was established in 1990 under the auspices of the Holy Armenian Apostolic Church Diocese of Canada. Its main mission has been to help those children who became orphans because of the 1988 Earthquake and, subsequently because of the Artsakh war.

Since its inception and thanks to the donations and sponsorship of our Canadian-Armenian faithful, **the program has provided ongoing help to approximately 2000 orphans and needy children.**

It has become obvious that the mission of CFFA will require some changes. The CFFA committee has decided to continue the program with future changes that will take effect in 2015.

The intention of CFFA is to focus its activities in order to aid the orphans and children of poor and needy families living at the border villages of Armenia. Simultaneous with providing aid comes the possibility of improving the life of the villagers by creating jobs.

Dear Faithful,

Let us praise and pray for the Glorification of our Lord; being the Lord's creatures, may we promote happiness and be witness to a joyous and beautiful world.

We appeal to you, on behalf of CFFA, to continue the honest Christian tradition of Charity by donating to its mission, thus contributing to a positive change in the life of those in need.

With love and prayers,

Bishop Abgar Hovakimian
 Primate of the Armenian Apostolic Church Canadian Diocese

Please make cheques payable to: Children's Fund for Armenia. All donations are tax deductible.